Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 645 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՔՈՎԻԴ-19 ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել Քովիդ-19 պատվաստման վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության հասանելիությանը և իրազեկման մակարդակի բարձրացմանը ազգաբնակչության շրջանում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի և Լոռու մարզեր, բնագավառը՝ առողջապահություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 22,200,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի և Լոռու մարզերի ազգաբնակչությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2022 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Թիրախ մարզերի բնակչության կարողությունների զարգացում և իրազեկում՝ ռիսկերի և Քովիդ-19 պատվաստման վերաբերյալ<br>Ժամանակահատված՝ 2022 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը, բյուջե՝ 20,480,000 դրամ<br>2. Կազմակերպական ծախսեր:<br>Ժամանակահատված՝ 2022 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը, բյուջե՝ 1,720,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը՝ |

| | | |
|---|---|---|
| | ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Միջոցառումների և դասընթացների համար դահլիճի վարձակալություն, հյուրանոցային ծառայությունների և սննդի ձեռքբերում՝ 15,000,000 դրամ: 2. Իրազեկման համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերի մշակում և տպագրություն, ստրիպերի, ասեղների և պլանշետների՝ 5,480,000 դրամ: 3. Մեքենայի պահպանման, տրանսպորտային միջոցի վարձակալության և վառելիքի ձեռքբերման ծախսեր՝ 1,720,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի կազմակերպական ծախսեր՝ 1,720,000 դրամ, որը ներառում է վառելիքի ձեռքբերում, մեքենայի պահպանման և տրանսպորտային միջոցի վարձակալության ծախսեր՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակեր-պությունների հետ | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի և Լոռու մարզերում առողջության պահպանման առաջնային օղակի, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական ոակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կտրամադրվի տեղեկատվություն լիազորված մարմնին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ